


ԲԱՅՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ 30 սենդ

ԱՆՆԻՍԻ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ . ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՅՏԱԿԱՆ

— ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ. —

Ե. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 7 ՇԱՐԱԹ 1901

ԹԻԻ 218

ԲԱՅԱՆԱՆԵՐԸ

Եթէ մէկը հետաքրքրութիւնն ունենայ թղթատելու Հայեղիի հինգ տարուան համարները, հասկնալ ուղեւիտ համար թէ ո՞ր խնդիրը ամենէն աւելի ծեծուած քննադատուած, գանգատներու, բողոքներու առիթ տուած, և զայն թակղական տեսարաններու անընդհատ տաղանջութեամբ հանդիսագրած է հասարակութեան առջեւ, ցաւօք պիտի տեսնայ որ մեր երանելի տէրպապաներուն յաւիտենական խնդիրն է ասիկա: Հայութիւնը արտասահման ապաստանած ատենը թերեւ մտքէն անգամ չէր անցուներ թէ իր ազատագրութեան աւագ հարցին և անոր անմիջապէս առընթերակից կենսական հարցերուն մտազբաղումէն զատ քահանաներու անհանգուրժելի հարցովն ալ զբաղելու գառն ու տաժանագին հարկատուութեան մէջ ալ պիտի գտնուի:

Ո՞վ կրնար մտքէն անցունել որ մեր այս անլուրդական կրօնաւորները, մեր յաւէտ սիրելի տէր պապաները, յաւէտ անգիտակից ազգին խորունկ ցաւերուն, իրենց հետ արտասահման պիտի փոխադրէին իրենց ազատ կիրքերուն, իրենց չարչիական ստորին հաշիւներուն, շահագործման տխուր ու գոյթակալից հնարքներուն ամբողջ հրէշութիւնը: Ո՞վ կրնար երբէք մտքէն անցունել որ բռնութեան լուծէն իր հօտին հետ խոյս տուող քահանան իրեն կէտ նպատակի ընտրած պիտի ըլլար փախստական ժողովուրդին շուարումէն օգտուիլ և անոր տրամադրութիւնները իր անարգ շահագիտութեանց առարկայ դարձնել: Եթէ հնգամեայ շրջանի մը միջոցին միմիայն մեր թերթին մէջ պարզուած քահանայական գայթակղութիւնները բերենք ի

մի հաւաքենք. կրնայ հասոր մը ձեանալ ցուցագրող այդ ողբալի արարածներուն բոլոր ցաւազարութիւնները, բոլոր շահատակութիւններն ու աճաբարութիւնները:

Արտասահման նետուող այդ անարժան հոգեւորականները բոլոր ճարտարութիւններն թափած են պէսպիսութիւն մը դնելու համար իրենց վաշտէր արարքներուն մէջ: Թուրքիա, հոգեւոր բարձրագոյն իշխանութեան համեմատապէս խիստ լուծին տակ, անոնք մինչեւ մէկ աստիճան կարծես սանձ մը կը դնեն իրենց կիրքերուն և անսուակութիւններուն. բայց հոս, արտասահմանի ազատաշունչ հողին վրայ, անոնք սանձարձակ ասպարէզ կուտան իրենց բոլոր կիրքերուն. հոգեւոր իշխանութիւնը հեռու է. յետոյ տեղէ տեղ փոխադրուելու անբաղդատելի առաւելութիւնը կայ: Պուլկարիոյ մէջ շահագործման գետին չմնաց մի անցիր Ռումանիա, Եգիպտոս, Պրանսա, Ամերիկա, շատ, և ամէն մէկ գացած տեղիդ մէջ իբրեւ անժանօթ անպատիժ կերպով վերսկսէ շահատակութիւններու գանձերը շարքը, մինչև որ ժողովուրդին համբերութիւնը ալ հասած օձիքէդ բռնելով դուրս նետէ քեզ, և այն ատեն ուրիշ տեղի մը ընտրութեան հոգը միայն ունիս, սիրելի տէր հայր, հոգ՝ որմէ ինքզինքդ շուտով ազատելու բնածին ճարտարութենէն ալ զուրկ չես:

Մենք հոս հարկ չենք սեպել թուումն մասանցը ընել մեր այս տխուր շահատակներուն քաջագործութեանցը, վասն զի անոնք չափէն աւելի ծանօթ են և ուղուածէն աւելի յաճախադէպ: Հետաքրքրուողները թող բանան Հայեղիի վերջին երկու թիւերը միայն, և կատարելապէս պիտի գոհանայ իրենց հետաքրքրութիւնը:

Պիտի ըսուի որ մեր քահանաներուն այս

ցաւալի հարցին վրայ տարիներէ ի վեր կը գըր ուի՝ առանց նպատաւոր արդիւնք մը ձեռք բերուելու. հետեւապէս ինչ օգուտ վերաբառնալ այս տեսակ անլուծելի հարցի մը վրայ, Այսպէս մտածողներուն կը պատասխանենք թէ՝ լրագրի մը պարտքն է միշտ մատը դնել ժողովուրդին կենսականութիւնը ուսող սպառող վէրքերուն վրայ, անոնք որքան ալ անբուժելիութեան հանգամանքը ներկայացնեն: Գուցէ օրին մէկը, վերջապէս կարելի ըլլալ մէկ դեղը դարմանը գտնալ այս սարսափելի վէրքին, բայց մինչեւ այդ օրուն հասնիլը, մեր պարտքն է կոչում ընել ժողովուրդին որ ամենախիստ կերպով վերաբերուի իր հոգեւոր միջոցառութեան գործն ստանձնող կրօնական պաշտօնեաներուն նկատմամբ որոնք չարաչար կերպով կը շահագործեն իր տրամադրութիւնները և անխղճօրէն կ'օգտուին արտասահմանի ազատ անկաշկանդ գրութենէն:

ՍՈՒՐ

ԱՉԳԱՅԻՔ

Բարիզէն մեզ կը գրեն թէ, Պ. Չօպանեան՝ հայասէր ֆրանսացի բռնօքէսէօնները համոզեր և իրենց ստորագրութեամբը նախկ մը շրկել տուեր է Տիար Մանթաշեանի, սա մտօք որ, քանի որ Բարիզի մէջ հոյակապ եկեղեցի մը շինել կուտայ, քովն ալ քօլէժ մը շինէ:

— Տեղւոյս Աղջկանց Կրթարանի ամսվերջի հրապարակային հարցաքննութիւնք պիտի սկսին վաղը, Յուլիս 8 կիրակի օրէն և պիտի տեսնին մինչեւ Յուլիս 14 չարաթ, առտունները ժամը 10էն մինչև 12, իսկ կէս օրէն վերջը 2էն մինչև 4: Կը հրաւիրուին ծնողք և պաշտպանք ներկայ գտնուիլ քննութեանց:

— Դարձեալ Բարիզէն մեզ կը գրեն թէ հոն գտնուող մէկ քանի Ռուսահայեր փափագեր են ընկերութիւն մը կազմել որ Միութիւն անուամբ մկրտուած է, և որուն նպատակը հետեւեալն է.

1. Զարգացնել համերաշխութիւնը Հայոց մէջ:

2. Պաշտպանել օրինական միջոցներով Հայոց բարոյական և նիւթական միջոցները:


3. Սեղմել Հայոց մտքին կապերը եւրոպական քաղաքակրթութեան հետ, և ճանչցնել եւրոպային Հայոց մտաւորական և տնտեսական կեանքը:

4. Նպաստել Հայ դպրոցներուն զարգացման և աշխատիլ եւրոպական համալսարանական քաղաք մը մէջ հայկական գօլէժի մը հաստատման:

5. Այս վախճանին ձգտող ու է գործ եւ հրատարակութիւն քաջալերել:

(Որչափ բառ՝ այնչափ անկարելիութիւն...)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ



Պուրէշ 24 Յունիս

«Շարժում»-ի 321րդ թիւն մէջ կարդացի Պ. Արիս Լազարի հերքման մէկ գրութիւնը որուն չպիտի պատասխանէի, եթէ փառասէրի մը և խաչագողի մը պաշտպանութիւն ըրած չըլլար: Ներկայիս կուգամ պատասխանել մի քանի կէտերու մասին:

Պ. Ա. Լազար նախ հայկական թերթերը տեսակ մը գործիք կը ներկայացնէ ընթերցողին, մինչդեռ ինքն է որ կոյրզկոյն փառասէրի և խաչագողի մը գործիքը եղած է:

Պ. Ա. Լազար իր խեղճուկրակ դիտողութիւնները սապէս կ'սկսի.

«Շատ չի պիտի զարմանայի ես ալ կատարով Պ. Շահմիրի թղթակցութիւնը, եթէ նախապէս գրած չըլլայի թէ Պուրէշի ընթերցարանին բացումը որոնց կը պարտինք»:

Կը պատասխանենք թէ ընթերցարանին բացումը միմիայն գաղթականութեանս կը պարտինք:

Երկրորդ կըսէ թէ «փափաքը իրագործելու համար, ժողովրդին համակրութիւնը վայելած ըլլալու է, որմէ չուրկ մնացած են այդ երիտասարդները»:

Կը պատասխանենք. եթէ այդ երիտասարդները ժողովրդին համակրութիւնը չեն վայելած, ինչպէս կըլլայ որ առժամայ և արդի վարչութիւնը գլխաւորաբար այդ զգայուն երիտասարդներէն կը բաղկանայ:

Գալով Պ. Խաչիկ Մանուկեանի, (*) որուն անունին սկզբնատառը տպագրական աննշան սխալի մը պատճառաւ մը ի փոխուած է, և զոր Պ. Նամակագիրը յիշեալին հետ ունեցած անձնական հակառակութեան կը վերածէ, ըստ իս շատ ծիծաղելի կը թուի, որովհետեւ Պ. Խ. Մանուկեան Շահմիրի հետ ու է անձնական հակառակութիւն մը չունենալէ զատ, տարուան մէջ գրեթէ հազիւ երկու անգամ երեսը կը տեսնէ:

Պ. Ա. Լ. Պ. Մանուկեանի գործերու մասին կարգ մը գովասանքներ կ'ընէ. սակայն մենք մեր նախորդ նամակովը այդ գովասանական գործերը բնադատելու պէտք

(*) Մականուն մը որ գաղթականութիւնս «Շարժում»-ի 321րդ թիւն մէջ կարգաւոր ճանչցաւ, բայց մինչեւ ցարդ կը ճանչնար Իւզսիւղեան:

բը չէինք պատգամ և ոչ ալ «Իւսիւզ» կամ «Անեքսո»
ածականով շնորհաւորած, արդ և այդ պատիւն (?) ալ
Պ. Ա. Լազար կրնէ, ուրեմն թող երախտապարտ ըլլայ
Պ. Խ. Մանուկեան:

Իսկ գալով յայտնի խաչագոյ (**) վանքի Գէորգի, զոր
Պ. Ա. Լ. կը պաշտպանէ ըսելով թէ «նա է որ ժողո-
վրդին բոլոր խաւերուն մէջ մտնելով տարածած է ըն-
թերցարանի պէտքը» և այլն. բոլորովին սխալ և կամ ա-
ւելի ճիշդը ըսելով սուտ է: Ինչպէս Շարժումի 316րդ
թիւն մէջ գրած էինք այդ տղոսի մարդուկին արարքը,
և ատոր ապացոյցն ալ սա է թէ, առժամեայ վարչու-
թեան յարգելի անդամներէն մին, հայոց զբօսարանին
մէջ ժողովրդին առջև խայտառակեց երեսը թքնելով ու
ժողովուրդն ալ գրգռեալ՝ այդ մարդուկը զբօսարանէն
դուրս վաճառեց. նոյն միջոցին ես ալ ներկայ էի: Եթէ
Պ. Ա. Լազար դարձեալ առանց փաստի պաշտպանելու ել-
լէ, նորէն կը կրկնեմ և ի պահանջել հարկին պէտք ե-
ղած ամեն տեսակ փաստերով կ'ապացուցանեմ թէ ինչ-
պէս կամ ի՞նչ միջոցներով շորթած է Ռուսմանիոյ և Պուլ-
կարիոյ մի քանի քաղաքներու հայոց թեան գրամները, յե-
ղափոխական գիւմակի տակ ծածկուելով վերոյիշեալ յայտնի
խաչագոյը, և այդ պատճառաւ է որ տեղւոյս բոլոր գաղ-
թականութիւնը իր համակրանքը վերցուցած է այդ մար-
դուկի վրայէն ի բաց առեալ Պ. Ա. Լազար եւ ի Մա-
նուկեան, որ կը փափագին չեմ գիտեր ինչ գաղտնիչ-
պատակաւ մնայուն պաշտօն մը ստանձնել տալ ընթեր-
ցարանին մէջ այդ խաչագոյին, հակառակ ժողովրդին ու
ներկայ վարչութեան կարեւոր մէջ մասին կամայց:

Միթէ վարժանալի չի՞ թուիր Պ. Արիս Լազարի ընթաց-
քը, որ գրեթէ երկու օր է Պուրթէշ եկած, բանէ մը
տեղեկութիւն չունեցած ու խնդիրը լաւ մը չ'ուսումնա-
սիրած, մի փառասէր եւ մի խաչագոյ մարդուկներու քոր-
ծիք ըլլալով, կեղծ կարգ մը իրողութիւններ խեղճուկրակ
փաստաբանութեամբ խեղաթիւրել: Այդ պարունը սուի
վրայ ձերմակ դերձանով կարուած կարգ մը սուտեր ըն-
թերցողին կ'ընծեն տալու տեղ, աւելի լաւ չէ՞ր ընել
իրեն յանձնուած պաշտօնին գիտակից ըլլալով ընթեր-
ցարանի կանոնագրին մարտը պատրաստելու ու ժողովր-
դին ներկայացնելու. ահա այդ պատճառաւ մինչեւ ցարդ
ընթերցարանը զուրկ է այդ կանոնագրէն. սակայն տես-
նենք թէ Պ. Արիս Լազար գիշերները իր բարեկամին
տունը փախա-փախչի խաղալէն գլուխ առած ունի...

Ա. ՀԱՀՄԻՐ

(**) Մենք մեր նախորդ նամակով սոյն մարդուկին
«խաչագոյ» անունը տուած էինք, սակայն «Շար-
ժում»-ի խմբագրութիւնը չեմ գիտեր ինչ նպատակաւ
չէր գրած խաչագոյ անունը:

Ա. Հ.

(Պ. Խ. Տօլպիստին ալ խմբագրութեանս ուղեւալ նա-
մակաւ մը կը յայտարարէ թէ վանքի Գէորգը խաչա-
գոյ մ'է եւ իր նամակին մէջ գրած այդ անունը՝
Շարժումի խմբագրութիւնը «վարչութեան անգամ»
բառին վերածել է:

Ծ. Խ.

ՏԵՂԵԳԻՐ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Զուիցերիա.

Պատիւ ունինք մեր ընթերցողաց աւետել
թէ Յեղ. կուսակցութիւններնու երկրորդ ժողով-
նան ալ ծայրը ցուցուց:

Թիւ 1. Ռուսոյական կուսակցութիւն. ո-
րուն նպատակն է եղեր «Հայկական դատին հա-
մար գործնական միջոցներու դիմել, ազատու-
թեան կռուին համարձապ ազգական տեսակետով
մարդիկ պատրաստել»: Իր այս նպատակը գոր-
ծադրելու համար պէտք ունի եղեր... գործած-
ուած բոսթայի բուլի և քառթ բոսթալի: (Բոսթ.
— Զորս անշուշտ պիտի յատկացնէ վարչական
ժողովին զբաղանքներուն ծակերը ետեւա ընելու
համար):

Բամշաթքա

Մեր թաղ. խորհուրդը՝ գրամ բերողնե-
րուն՝ «եկայր առ իս, ես թաղական եմ» կըսէ,
բայց եթէ իրենց առնելիքները պահանջողներ
խորհրդարան դիմեն՝ «չեմ խառնուիր, ի բաց
կացէք յինէն ամենեքեան» կը գոչէ:

Ուրիցա թօթ թօթ

Հասկցուեցաւ. վարժարանիս տխրահուշակ
առաւ—փախաւ տնօրէնը՝ ինքզինքը Հունգա-
րիոյ Կէռլա և Սուչովա քաղաքները նետած է՝
տեղւոյն պարզա՛հիտ հայերը շորթելու համար:

Հաճի Բանաքո

Երկու երիտասարդներ որոնք օրիորդի մը
սիրահարած էին, հինգշաբթի գիշեր ժամը 1ին
ծովեղերեայ մեծ պարտէզին դռանը առջեւ
կռուի բռնուեցան. հոն կեցող գողտնախառն
միջամտեց և սա վճիռը արձակեց. «գիշին էօ-
նիւնտէ մէնտիլ ուծու թութառսինիկ, տույու-
լուք թարաֆ խանկի՞նիդտա գալիռա՛՛օ եա-
վուգլու օլածապ» պարոնները այս վճիռին հա-
մակերպեցան ու իրարու ձեռք սեղմելով հեռա-
ցան: Իսկ գուզունաբեւածին անոնց հետեւէն նա-
յելով, ծաղրածու եղանակաւ երկու անգամ
հայ... կուկո՛կ, պոռաց:

Բամշի պոյ

Բարեկեցիկ ընտանիքի մը հայրը մեռնե-
լով, տակաւին դադաղը տունէն դուրս չի հա-
նած, անոր բարեպտուղ զաւկները դարաններն
ու սնտուկները եօզաւաւայի ելան:

Թ Ղ Թ Ա Խ Ա Ղ Ը

Գիտուններն ապացուցած են որ խաղի թուղթերը գոյութիւն ունէին Հնդկաստանի մէջ։ Նախնական խաղերը, որոց կը գործածուէին այս թուղթեր, կերէի թէ պատերազմական խաղի այլաբանութիւն մ'էին, հնդկական ճատրակի քարերուն պէս։ Թղթախաղն Հնդկաստանէն փոխադրուեցաւ յիտալիա, ուր նախապէս եղաւ հաշիւի և զուտ զբօսանքի խաղ մը որ կը յանձնարարուէր տղաքներուն։ Միլանի Դուքսը, Ֆիլիբ Մարի Վիսքոնդի, իր տղայութեան ատեն, այսինքն 1400 ի տեսները, շատ սէր տուած էր խաղի մը, որ աստուածներու, կենդանիներու, թռչուններու և, պատկերները կը ներկայացընէր։ Իտալական թղթախաղը անկէ ելաւ։ Ամենէն հին խաղն է Դարօքքօ, կամ՝ Վենետիկեան Դարօքքախաղը ըսուածը, որ 78 թուղթերէ կը բաղկանար։ Ասոնց 56ը չորս կարգի բաժնուած էին մասնաւոր նշանով մը, և մէն մի կարգ ունէր կանոնական պատկերներն, այսինքն իշխանը, տիկինը, ասպետը, սպասաւորն և մէկէն մինչեւ տասը կէտեր ունեցող թուղթերը։ Միւս 22ը կը ներկայացնէր այլաբանական պատկերներ, և բաց ի գրօշակիւրէն միւս ընդ որ խաղի թուղթերէն բարձր էին և այս պատճառաւ կը կոչուին աղու, գող կամ յաղթանակ։ Ուրիշ խաղեր հնարուեցան։ Պօլօնքի դաւախման, որ 1419ին գտնուեցաւ, 62 թուղթ ունէր։ Փլօրէնսի միմիխալը, որ ժՉ. դարուն հնարուեցաւ, 97 թուղթ ունէր, որոցմէ 41ը դառօքքաքարտ։ Պարապ թուղթերուն վրայ բաժակ, սուր, գաւազան ևն կը գտնուէր։ Ֆրանսայի մէջ այս նշաններուն տեղ դրուեցաւ մալլա (բիքա), օրեալ (քառօ), ֆուրա (քէօր) և էսպարի (թրէֆլը)։

Գերմանք իրենց խաղի թուղթերուն համար գործածեցին ամէն տեսակ առարկաներ։ Ամենէն աւելի գործածուած են սիրտ, բոժոժ, որթաքերէ ևն։ Թղթախաղերն զբօսանքի նիւթ ըլլալէ ետքը շուտով բախտի խաղեր եղան։ Մարդիկ կատաղութեամբ կը խաղան և իշխանութիւնք, ժԳ. դարէն ի վեր, կը շահան սանձել այս տխուր կէրքը։ 1399 Յունուար 22ին Բարիզի պատուարապետն հրամանագիր մը հանեց, որով էսմալ մարդոց կարգիւրէր խաղալ գործի օրերը։ Այս հրամանագիր կրկնուեցաւ 1400ին և 1406ին։ 1404ին Լանկրի Սինոգն եկեղեցականներուն արդիւնց խաղը։ Մեծանուն քարոյիչներ Սէն Պէրնարտէն Տը Սիէն 1423ին Պօլօնքի մէջ և Եղբայր Ռիշար 1429ին Բարիզի մէջ շահութեարձակեցին թղթախաղերու դէմ։ Խաղի թուղթերը նախապէս ձեռքով նկարուեցան։ Ասոնցմէ

գեղարուեստական նմոյշներ կան մի քանի հաւաքածոներու մէջ։ Եւ որովհետեւ այս կերպով շատ սուղ կեղնէին, կաղապարի վրայ նկարուեցան ապա։ 1440ին Գերմանիոյ մէջ նախ փայտի և ապա մետաղի վրայ փորագրեցին։ Ասոնցմէ գեղեցիկ նմոյշներ պահուած կան։ Ֆրանսական թղթախաղերը մանաւանդ փայտի վրայ փորագրուած էին։ ԺՁ. դարուն մէջ խաղի թուղթերու պատկերներուն զանազան անուններ տուին, ասպետական վիպասանութիւններէ փոխ առնելով։ ԺԷ. դարուն մէջ, ի պաշտօնէ ընդունուեցաւ Դաւիթ, Ալեքսանդր, Կեօար և Կարոլոս անունները, իշխաններուն համար, Բալաս, Արժին, Ռաբէ, և Յուդիթ տիկիններուն համար և Հէքստոր, Լանսլօ, Օթիէ և Լահիր՝ սպասաւորներուն համար։ Ֆրանսայի մէջ գործածուած խաղի թուղթերը կառավարութեան կողմէ կը ծախուէին, մասնաւոր թուղթի վրայ պատրաստուած։ Սպարիին մէկնոցը (պէյ) երթարկուած է մասնաւոր դրոշմի մը, զոր ձեռնհաս Վարչութիւնը կը խօսէ իր ծախած թուղթերուն վրայ։ Այս կերպով տարին 3 միլիոն ֆր.ի հասոյթ մը կը գոյանայ։ Արտածման յատկացուած խաղի թուղթերը տուրք չեն վճարեր և արտասահմանի մէջ շինուած թուղթերուն ի ֆրանսա ներածումն արգիւրած է։ Ռուսիոյ մէջ խաղի թուղթերուն վրայ դրուած տուրքը շատ բարձր է։ Թուրքիոյ մէջ, ճիշտ ուրիշ ապրանքներու պէս, 100րն 8 մաքսատուրք կառնուի։

Թարգմ.

ԱՍՏԳ.

Ե Ր Ե Ք Գ Ո Ղ Ե Ր

Երեք գողեր հեռուէն գալտին մէջ կը տեսնեն հովիւ մը որ իշու մը վրայ նստած կը մրափեր, ետեւէն ալ վզէն փոքրիկ զանգակ մը կախուած ոչխար մը ձգած՝ Տընկըլ Տընկըլ կուգայ։

Գողերէն մէկը կըսէ իր ընկերներուն.

—Ընկերք, եկէք սա մարդը կողոպտենք, բայց անանկ վարպետութեամբ մը որուն վրայ մատուած անգամ վերէն զարմանայ։ Ես իմ վերաս կառնեմ ոչխարը գողնալ, անանկ ձեռով մը որ մարդը չիմանայ։

—Ես ալ էջը կը գողնամ, կը պատասխանէ երկրորդը.

—Այն ատեն, մարդուն հագուստները թրուցունելն ալ ինծի կը մնայ, կը յարէ երրորդը.

Այս համաձայնութենէն ետքը, առաջին գողը լռիկ մնջիկ, ծռելով ծռարկելով կերթայ կամացուկ մը ոչխարին վզէն կը հանէ զանգակը և զայն իշուն պոչին կապելէն ետքը ոչխարը կը գրկէ կը տանի։

Ելուն վրայ հեծնող հովիւը զանգակին ձայնը լսելով երբ տակաւին կը կարծէր թէ ոչխարը ետեւէն կուգայ, յանկարծ ետին կը դառնայ, ու տեսնելով որ թէև զանգակին ձայնը կայ, բայց ոչխարը չի կայ, էշէն վար ցատկելով տփ ի բերան կը մնայ։ Այն միջոցին երկրորդ գողը ասոր մօտենալով կը հարցնէ թէ.

— Ինչո՞ւ զարմացեր կեցեր է.

— Ինչպէ՞ս չի զարմանամ, եղբայր, քանի որ կը տեսնեմ ոչխարիս զանգակը իշուս պոչէն կախուած, իսկ ոչխարս յափշտակուած.

— Ճշմարիտ է, ամուսն է եղբր քեզի. էշդ ալ որ դանդաղաբայ է, արգելք պիտի ըլլայ քեզի հոս հոն իյնալով ոչխարդ պտնելու. եթէ կ'ուզես, բարեկամական ծառայութիւն մը մատուցանեմ քեզ. որովհետեւ մացառներու խտութենէն էշդ չկրար անտառը մտնել, ուստի ես զայն բռնեմ հոս կենամ, դուն գնա փնտռէ ոչխարդ որ հաւաստի եմ թէ մօտակայ անտառը փախուցած ըլլալու են.

Հովիւը կը համոզուի, ու «Շատ աղէկ կըլլայ» ըսելով երբ անտառը կը մտնէ, գողը իշուն վրայ ցատկելուն պէս կ'աներևութանայ.

Աւելորդ է ըսել թէ որքան կ'աւելնայ մարդուն զարմանքը, տեսնելով որ ոչխարէն զատ այս անգամ էշն ալ վրայ տուած է. Հալիւ քանի մը քայլ կ'առնու, ահա երրորդ գողը իրեն կը մօտենայ, ինքզինքը բոլորովին սրտում ու տխուր ցուցնելով.

Երբ մեր իշակորդոյ մարդուկը անոր տխուր թեան պատճառը կը հարցնէ.

— Ո՛հ, ինչպէ՞ս չի տրտմիմ, կը պատասխանէ խորամանկը, սա ձորակի լճին մէջէն անցնելու ատենս ձկեցի խուրձս, որուն մէջ մեր քաղաքին մեծաւորին տրուելիք նուէրներ կային. ա՛հ, ո՛ւր էր թէ մէկը ըլլար զայն հանէր, ըստ որում լողալ չգիտեմ, և ես փոխարէն իրեն մինչև տասը ոսկի կը հատուցանէի:

Մեր մարդուկը ինքնիրեն կըսէ թէ. — Աս աղւոր բաղդ մըն է. իշուս ալ ոչխարիս ալ կրկին գինը ձեռք ձգած կըլլամ եթէ հիմա հանուիմ, մտնեմ սա լիճը ու հանեմ խուրձը, քանի որ լողալու արհեստին ալ բաւական վարժ եմ:

Կարճ խօսինք, երբ մտքէն անցուցածը անմիջապէս ի գործ կը դնէ, երրորդ գողն ալ անոր հագուստները առնել ու թուցնելը մէկ կընէ. Դարձեալ աւելորդ է ըսել թէ, որքան մեծ կըլլայ մարդուն զարմանքը, երբ ջրէն ելլելէն ետք ինքզինքը ոչ թէ միայն ոչխարէն ու էշէն զըրկուած, այսինքն իր միակ հարստութենէն կ'ողողաւորուած, այլ և արեւուն տակ կը գտնէ մօրէմերկիկ.

(Այս վէպին բարոյական միտքը սա է որ,

մարդիկ պէտք չէ որ զարմանան թէ Ադամ եւ Եւայ ինչո՞ւ խաբուեր են դրախտին մէջ սատանայէն, որ մարդէն տարբեր էակ մ'է, մինչդեռ իրենք ամեն որ իրարմէ խաբուելու վրայ են, որ իրարմէ տարբեր ալ էակներ չեն:



ՓԻՒՐ

Կ Ի Ն

Աշխարհիս մէջ երեք բան կայ, որոց թէ նրմանելու է կին մը և թէ նմանելու չէ.

Առաջին. — Պէտք է նմանի խղունջին, որ իւր տունը կը պահէ կանոնաւորապէս, բայց պէտք չէ որ անոր պէս իւր բոլոր ունեցածը շալկէ.


Երկրորդ. — Նմանելու է արձագանգին, որ իրեն հարցում ուղղուած ժամանակ միայն կը խօսի, բայց պէտք չէ որ արձագանգին պէս վերջին խօսքը ինքն ընել աշխատի.

Երրորդ. — Նմանելու է քաղաքի մեծ ժամացոյցին, որ ճշգրիտ և կանոնաւոր ընթացք մը կ'ունենայ, բայց պէտք չէ որ անոր պէս բոլոր քաղաքը դղրդող աղմուկ պատճառէ:



ՀԻՆ ՕՐԷՆՔ ՄԸ


«Վեց դար առաջ, Փարաւոններու երկրին մէջ օրէնք մը կար որ անհաւատարմութեան յանձանք բռնուած կնոջ քիթը կը կտրէին, իսկ նոյն յանձանքով բռնուած մարդուն աչքը կը հանէին», կըսէ պատմագիր մը, և իր կողմէն կը յաւելու. — Ա՛հ, եթէ այս վաղեմի և խիստ օրէնքները վերայառնուին, շատ տեղեր պիտի տեսնուէին քիթը կտրուած կիներ և առանց աչքի մարդեր:



ԳԻՒՂԱՊԵՏ ՄԸ

Միականի մը՝ գիւղապետին ներկայանալով անցագիր կուզէ. գիւղապետը անցագրին գիմագծութեան մասին մէջ հետեւեալ կերպով կը գրէ, քիչ մը վարանելէ ետքը,

«Աչքերը սև, բայց մէկը պակաս»:



Նոր բացուած վաճառատան մը վրայ հետեւալ վերտառութիւնը գրուած էր .

Ուրիշ տեղ մի երբայք դրամնիդ գողցնել տալու : ՀՈՍ ԵԿԷՔ :

Պիտոս հանրմ, աղջիկդ շաբաթի թո՛վ դրեր ես .

—Հա, ամա քուրուկ, թոյ ճահիլ ըլլալուն, երթալ գալու համար ճամբան մինակ կը վախնայ կոր եղեր :

—Հոգ մի՛ ըներ . քանի մը օրէն անոր ալ աչքերը բացուելով, երբայք—գալու համար ընկեր մը կը ճարէ իրեն :

Միհրան աղան, գինով, գիշերուան ժամը 12ին տանը դուռը ձեռք կառնէ .

—Ո՞վ է ան, կը հարցնէ կինը ներսէն .

—Բա՛ց կնիկ, ես եմ .

—Ես քեզի չըսի՞ քի մէյմըն ալ ատանկ ուշ գաս նէ քեզի դուռ չեմ բանար :

—Բա՛ց, կնիկ, բա՛ց կըսեմ կոր . քեզի շաբաթ կապել տուի, անձրեւին տակ կը թրջի կոր .

—Աստուած պէլադ, չի տայ մարդ, գլխուս չափը չառած նասը՛լ կապել տուիր :

Ու դուռը կը բանայ, հաստատելու համար թէ՛ արդուզարդը աւելի կիշիւէ կնո՛ջ կամքին քան թէ էրկանը համամանը :

—Բա տուտու, աս գիշեր միսափիր պիտի գայ, կերակուրները շնորհքով բաներ ըլլան . տեսակներն ալ շատ ըլլայ :

—Ի՞նչ կըլլանք կոր ճանրմ, ո՞վ է եկողը .

—Վարժապետս է :

—Անանկ է նէ էրկու տեսակը բաւական է . զավալըները չիտիէ չիտակ այլըն առած չունին, նայինք մէկ տեսակը կը գտնա՞ն կոր :

Ոսկերիչ միսիւ Գրաբոսի ամուսնանալէն վեց օր ետքը զոքանչը կը մեռնի . փեսայն այն աստիճան հեծեծանօք կուլայ որ աչքերը արիւն կը լեցուի : Հարսը կը հարցնէ թէ .

—Մայրիկս շա՛տ կը սիրէիք որ այսչափ կուլար .

—Ի՞նչ կըսես, խուշիկս, անոր ինծի ըրած բարիքը մինչեւ գերեզման մտնալիք չունիմ :

—Թօհաֆ բան, ես չեմ գիտեր կոր . ի՞նչ բարիք էր ըրածը .

—Ալ ի՞նչ պիտի ըլլար . ահաւասիկ կարգուած շաբթուս կը մեռնի . ասկէ աւելի բարիք կըլլայ .

—Կը սխալիս հոգիս, եթէ անոր տառաք կեսուրոջս ալ ըլլայ՝ իշթէ ան ատեն բարիքնիս կատարեալ կըլլայ :

—Մայրիկ, ինչո՞ւ համար հայրիկս կիրակի օրերը տունը չի կենար .

—Էսնաֆ միսաֆիրները ռասթ չիգան տէյի .

—Էսնաֆ միսաֆիրները որո՞նք են .

—Հաճի պախալը, ուստա խասապը, միսիւ զավզավաթնիս ու պարոն էքմէքնիս :

Ի խ թ Ս Ր

«Այլիւսի Լէթայիֆ» պիր իբի հաֆթա չըգարաւ մատըղըղըն սէպէպի շու տըր քի, քէնտի հիւսնիւ րիւ զալարըլա ապօնէ հազըլան 225 զէվաթտան եալընը 83իւ ապօնէ պէտէլաթընը վերմիշ օլուպ, գալան 132 քիշի՝ պու կիւն եալըն տէյէրէք հալէա թէէտիյէ իթմէմիշ տիրլէր, պիստէն ալէյհ ագէճէ սըզընթը չէքմէքտէիզ :

Պիղ՝ զատիմիղ իւղլէ հէր պիր ֆէտաբեարըղը կէսզէ ալըպ, 20 նիւսիւէյի թէքմիլ իտէճէիղ, վէ զաթէն 14 նիւսիւէյին վերմիշ օլուպ՝ պիր իբի հաֆթա պիլմէճպուրիյէ կէճիքտիրմէմիյէ էհիլ ինսաֆ օլանլար թարաֆընտան չօգ կէօրիւնմէյէճէինէ տաիր իւմիւտվարըղ :

Պու միսաֆիրթիլէ թէքրար րէճա իտէրիզ քի՝ ապօնէ պէտէլաթընը արթըգ կէօնտէրսիւնլէր . պէշ այտա 2 ֆրանք վերլիմէղ պիր բարա մըտըր : Քեալըտ, բուլ վէ մաթպուտ մասարիֆաթը բէշին օլուպ, պէտէլի ապօնաթ իսէ վերէսիյէ օլուր մը :

Պու կիւնտէն իթիպարէն, թէէտիյէ իտէմէյէնլէրէ արթըգ «Լէթայիֆ» կէօնտէրիլմէյէճէք, վէ 1ինճի ճիլտին իթիմընտա՝ ապօնէ պէտէլիլի թէէտիյէ իտէն զէվաթըն էսամիսինի գարաղը՝ իշինտէ նէշր իտէճէիզ :

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (25)

ՌԵՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԺԻՐ-ՄԱՄԱՆԿԸ)



Սակայն, տեսնելով այցելուներուն ներս մտնելը, ինք որ միայն բժշկին այցը կընդունէր, նախ եւ առաջ չհասկեցաւ թէ ինչ կը նշանակէր այս:

Աչքերը սեւեռած այդ խմբակին վրայ որուն երկու անձերը իր անհետացած երջանիկ օրերը կը յիշեցնէին իրեն, նախ կարծեց թէ երազի մը խաղալիքն է և շնորհակալ եղաւ Պուստտին որ իր առանձնութեան մէջ այդ երազը կը զրկէր. յետոյ միտքը լուսաւորուեցաւ: Այն ատեն, սիրեցեալ անունը մը մնրձնելով, թեւերն երկնցուց:

Սուր-Պրոտէ արդէն ծնրադրած էր բովը, և շուրջ թերը անոր նիհարեցած ձեռքերէն մէկուն վրայ, կը մրմնջէր.

— Ես եմ կուրստեանդ պատճառը: Ի-թէ. պիտի ներեմ ինձի:

Հիւանդը ժպտով մը պատասխանեց, և ուրախութեան արցունքներ վազեցին աչքերէն:

Կը հասկնար թէ սիրուած էր. չարչարանքներն ալ գոյութիւն չունէին. մինչեւ իսկ իր ցաւերը կը օրհնէր:

Պահ մը լսութիւն պահեցին:

Տիկին Լիու, որ ներկայ կը գտնուէր երկու հասարակական մաքուր հոգիներու այդ ամբիծ միացումին, միտքէն չէր անցուներ խռովել զանոնք:

Նախ ի-թէ խօսք առաւ:

— Կը տեսնես որ, ըսաւ իր զարմուհիին այն ընտանի շեշտով զոր կը գործածէր երբ տղայ էին, այս ամենը պիտի ըլլար և ես բան մը չունիմ քեզի ներքեւ: Աւերը գրուած էր թէ, միասին չկրնալով ապրիլ, մահուան մէջ պիտի միանանք: Ճակատագրին դեմ չըմբոստանանք: Հոս եմ, բովս ես, կը զգամ ձեռքդ որ իմ կը սեղմէ, ալ չեմ տառապիր, և հիմա մէկ բան միայն կը խնդրեմ. ուժս վերստանամ որպէս զի խեղճ անբասիր մարդու մը պէս երթամ տանջանքիս վայրը: Օ՛հ, իմ օրինակովս պիտի քաջալերեմ քեզի: Ինչո՞ւ երկու կեանք չունիմ: Քուկինիդ հետ պիտի տայի զանոնք:

— Բայց չպիտի մեռնիր, Ի-թէ: Ուրեմն չե՞ս գիտեր ինչ եղաւ:

Մօրմէն իմացածներն անմիջապէս հաղորդեց անոր:

— Կերպովս, պատասխանեց դատապարտեալը երբ աղջիկը խօսքը վերջացուց. ատանկ յոյսեր մի՛ ունենար: Ես չեմ ուզեր այդ յոյսերը, վասն զի շատ չանցած մեռնելուս ապահովութիւնը իրաւունք կուտայ ինձի ըսել քեզ. Կը սիրեմ քեզի:

Տիկին Լիուի աղջիկը սարսուռ մը զգաց որ ամբողջ էութենէն անցաւ, և գլուխը ծռեց:

— Այո, կը սիրեմ քեզի, կրկնեց երիտասարդը, և գեղադէպ ժամուն իմ ուրախութիւնս պիտի ըլլայ նորէն ըսել քեզ այդ բանը. նորէն աղաղակել՝ դահի՜ ձին սուրին տակ:

Եւ գերմարդկային ճիգ մը ընելով, Ի-թէ իր զարմուհիին վրայ ծռեցաւ. երկար համբոյր մը գնելու համար անոր ճակտին վրայ: Յետոյ, բոլոր այս յուզումներէն ընկճուած, մեռելական տփախութեամբ, գոցեց աչքերը եւ իր անկողնին վրայ ինկաւ, մրմնջելով.

— Քեզի ներքէն աւելին կընեմ, շնորհակալ կըլլամ և կը պաշտեմ քեզի:

Սուր-Պրոտէ կարծեց որ վերջին շունջը փչեց երիտասարդը:

— Ի-թէ, գոչեց, անոր վրայ նետուելով:

— Մի՛ վախճաք, տիկին, ըսաւ անոր հիւանդանոցին բժիշկը որ մեղմիւ վերցուց զայն և որ արդէն բանի մը վայրկեանէ ի վեր ներկայ կը գտնուէր այս սրտաշարժ տեսարանին, բարեկամիկ այս թալուկներուն ենթակայ է: Այսչափ յոգնութիւն կը բաւէ այսօր, մեկնեցէք:

Տըթմորին կողմէ հրաման մըն էր այս:

Լէնկի այրին հասկեցաւ. խոնարհեցաւ իր ազգականին այլայլած դէմքին վրայ, վերջին համբոյր մը դրուաւ ըսելով. «Քիչ ատենէն կը տեսնուինք» իբր թէ կարենար լսել զինքը, և նշան ընելով մօրը, նախ ինք դուրս ելաւ այդ սենեկէն ուր կը թողուր իր սիրտն համբուն:

Քանի մը վայրկեան ետքը, փոքր թափուրը բանտին ճամբան կը բռնէր նորէն:

Երկու դժբախտ կիները իրենց գահաւորակները նստած էին և միշտ իրենց հետ ունենալով ոստիկանութեան սպան, շատ չանցած հասան թաւնանի դուռը, աւելի բան քառասուն մէթը երկայն կամար մը, թաթարական ու չինական երկու քաղաքները բաժնող պատնէշին մէջ ծակուած, եւ երկու ծայրերը զինեալ պահակներու կողմէ պահպանուած:

Երբ տիկին Լիուի և իր աղջկանը գահաւորակիր-
ները ւտան այդ կամարին տակ, որուն ինչ ինչ կէտերը
կէս մութի մէջ կը մնան միշտ՝ հակառակ տեղ տեղ
գտնուած լուստերներուն, բազմութիւնն այնչափ հոծ
էր որ պարտաւորեցան կանգ առնել՝ սպասելու համար
որ ծածկան դիւրանայ:

Քանի մը վայրկեանէ ի վեր հոն էին գահաւորակ-
ները, պատին երկօխքը շարուած, երբ Սօլ-Պրոտէ
զգաց որ իր նայած կողմին հակառակ կողմէն ձեռք մը
կը ծանրանար իր ուսին վրայ:

Ետին դարձաւ մէկէնմէկ:

Մարդ մը, որուն գէմքը չէր կրնար որոշել, մին-
չեւ մէջքը գնակէն ներս մտած էր եւ իրեն կը բաշէր
աղջիկը:

Սա ուզեց աղաղակել, բայց դեռ աղաղակը չար-
ձըկած, անձանթը բռնած էր զինքը, համբուրած եւ
ետ հրած՝ ըսելով:

— Հիմակ գիտես թէ ջու ինչպէս վրէժ կը լուծէ:
Այլ մէկ անգամ միայն պիտի տեսնես Կարմիր-Մամու-
կը՝ կախաղանիդ տակ: Կուզէի քեզի հետ հոն ելլել
ծծելու համար արեանդ վերջին կաթիլը:

— Օգնութիւն, թո՛ղ քեզ Լիու-Սիու, գետին
նետուելով, գորշանքէ ու սոսկումէ խելալեղ:

Ճանչցած էր մտաւաճառը, թէ երբեք չատ ու-
շողորութիւն ըրած չըլլար անոր, և յանկարծ թուած
էր իրեն թէ առաջին անգամը չէր որ կը լսէր անոր
ձայնը, թէ և չեր յիշէր որ անոր հետ խօսած ըլլայ:

Ո՛ւր, ե՛րբ, ի՞նչ պարագաներու մէջ այդ ձայն
արդէն զարնուած էր իր ականջին: Չէր կրնար յիշել,
բայց սոսկումէ կը սարսուար:

Տիկին Լիու նախ պատասխանած էր աղջկանը կո-
չին: Բազուկներուն մէջ կը բռնէր զայն:

Ոչ ոստիկանութեան պաշտօնեան ոչ գահաւորակիր-
ները չէին հասկցած եղելութիւնը:

— Հոս, ճիշդ բո՛վս, տեսայ զինքը, կը կրկնէր
մանկամարդ կինը: Երբեք սեւեռաբիր և ձեռքն երկա-
րելով կամարին ամենէն մօտ կեղմը:

— Ի՞նչ եղար: Որո՞ւ վրայ կը խօսիս, հարցուց
մայրը խելացնոր:

— Ի՛նքը, Մարդասպա՞նը:

— Մարդասպա՞նը: Ո՞վ: Խնդրեմ, պատասխանէ:

— Օ՛հ, հիմակ կը ծանշնամ՝ զայն: Մտաւաճառ
ջուն է, Ֆուլ-Սիի մեր դրացին: Գիտես:

— Չո՞ւն, Կարմիր-Մամուկը:

— Այո, Կարմիր-Մամուկը: Ա՛հ, դեռ կը զգամ
հոս իր խածուածքը:

— Հանգարտէ նայինք: Երա՛յ մը, ցնորք մըն է
տտիկա:

— Օ՛հ, ոչ, տեսայ զինքը, և կը յիշեմ. Այն
ձայնն է զոր մէկ անգամ միայն լսեցի, իմ սննեկիս
մէջ, հարսնիքիս գիշերը: Օ՛հ, միշտ պիտի յիշեմ: Կը
վախեամ, կը վախնամ:

Սոսկումէ սառած, աչքերը կը փոցէր տիկին Լիուի
բով սեղմուելով:

Սա օգնութեան կանչեց գահաւորակիրներէն մէ-
կը, եւ աղջիկը նորէն դնելէ՝ յետոյ գահաւորակին մէջ,
պահակ ոստիկանէն խնդրեց որ հրաման ընէ ծածկայ
ելլել:

Քառորդ ժամ ետքը, բանտ դառնալով, Սօլ-Պր-
ոտէ որ քիչ մը ինքզինքին եկած էր, նորէն պատմեց
թաէնան գրան սոսկալի երևոյթը:

Առանց ուրիշ մանրամասնութիւններ հարցնելու,
մայրը համար կնոջ յանձնեց զայն և անմիջապէս գնաց
եղեռնագատ ատենի ետնադահլին տունը:

Փոխարքային հետ տեսակցութենէն ի վեր, Մէնկ
հազիւ կը համարձակէր հեռանալ՝ իր ամարանոցն եր-
թալու համար, վասն զի ծածկայ հանած էր իր բոլոր
գործակալները և կուգէր որ անոնք միշտ անյապաղ
գտնեն զինք այն բարեբաւտ պարագային մէջ ուր շահ-
կան բան մը ունենային իրեն հաղորդելու:

(Շարունակելի)

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ
կը ծախուին:

Լուսինեան Իշխան — Ֆրանսահայ Բաւարան,
գին 25 ֆր. սակեւրամ. Պուլկարահայ վարժա-
րանաց համար 20 ֆրանք:

Թ. Գ. Հինտլեան — Տեսական և գործնական
Քերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն
Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն. 2 ուկէս ֆր.

Թապալաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ.

Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1
արար 50 սնդ.

Մահճուպիյէթին միւլքեաֆաթը, 40 Տէտի պիր
բէրտէ, 50 սնդ.

Գագանճ գօճա հախօտ էնֆիյէճի, 40 Տէտի պիր
բէրտէ, 50 սնդ.